



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՉԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ
«ԲԱԿՏԵԿ ԷԿՈ» ՍՊԸ-Ի (ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԶՈՒՏԻ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունը ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

Երևան 2020թ.

1. Ընդհանուր տեղեկատվություն հանքավայրի, Ընկերության և ազդակիր համայնքների վերաբերյալ

Արջուտի ոսկու հանքավայրը գտնվում է ՀՀ Լոռու մարզում՝ Արջուտ համայնքի վարչական տարածքում, հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ին:

- Շահագործման թույլտվություն՝ 15.08.2014թ. ՇԱԹՎ-29/515
- Թույլտվության ժամկետը՝ 25 տարով (մինչև 2039թ.):
- Հանքավայրի մակերեսը՝ 16,7 հա
- Ընդերքօգտագործման պայմանագիրը՝ 22.08.2014թ. Պ-515
- Հանքաքարի հաստատված պաշարները՝ հանքաքար՝ 2423,9 հազ. տոննա, ոսկի՝ 3467,4 կգ, արծաթ՝ 20,39 տոննա, պղինձ՝ 6821,0 տոննա
- Հանքաքարի արդյունահանման տարեկան թույլատրելի քանակը՝ 100,0 հազ. տոննա

Ընկերությունում նախատեսված զբաղվածների թիվը՝ 2016թ. տվյալները բացակայում են, 2017թ.՝ 2 մարդ, 2018թ.՝ 1 մարդ:

Ըստ Ընկերության ԱՃԹՆ-ի շրջանակներում տված հայտարարագրի¹ Ընկերությունն այս տարիներին արդյունահանում չի իրականացրել:



Նկ. 1 Արջուտ գյուղը և Արջուտի ոսկու հանքի համայնապատկերը

«Բակտեկ Էկո» ՍՊԸ-ի իրական սեփականատերերի մասին

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 2020 թվականի մարտի 11-ի գրության համաձայն՝ «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ն օրենքով սահմանված կարգով իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրեր չի ներկայացրել, խախտվել է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց

¹ <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/?year=2017&company=26>

առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջը, որի 67-րդ հոդվածով այդ պահանջները խախտելու համար խախտողն օրենքով սահմանված կարգով ենթարկվում է պատասխանատվության:

Ազդակիր համայնքի մասին

Արջուտի ոսկու հանքավայրի ազդակիր համայնքն է ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքը: Ներկա դրությամբ համայնքն ունի 1380 բնակիչ, որից 699 կին և 681 տղամարդ, 82 ընտանիք ներառված են նպաստառուների ցանկում: Համայնքն ունի միջնակարգ դպրոց 100 աշակերտով, չգործող մանկապարտեզ, բուժկետ 1 բուժքույրով: Արջուտում զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ:

Համայնքի խնդիրներն են՝ բնակիչների աղքատությունը, գյուղտեխնիկայի բացակայությունը, համայնքային սուղ բյուջեն, արտագաղթը, ոռոգման և խմելու ջրի պակասը, ծնելիության պակասը:

Համայնքում ձևավորվել է 2 գյուղատնտեսական կոոպերատիվ: Համայնքի հողերից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 3254,11 հա, հատուկ պահպանության տարածքները՝ 6,06 հա, արդյունաբերական նշանակության հողերը՝ 60,34 հա: Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (170հա), կան պտղատու այգիներ (6 հա):

Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես արոտավայրեր, խոտհարքեր, վարելահողեր:

2. «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ի ստանձնած պարտավորություններն՝ ըստ 22.08.2014թ. Պ-515 ընդերքօգտագործման պայմանագրի

2.1. Սոցիալական պարտավորություններ

Ըստ 22.08.2014թ. Պ-515 ընդերքօգտագործման պայմանագրի՝ Ընկերությունն ազդակիր համայնքների նկատմամբ ունի հետևյալ սոցիալական պարտավորությունները՝

1. տարեկան 100,0 հզ. դրամ՝ համայնքի զարգացման տնտեսական ծրագրերին մասնակցություն
2. տարեկան 400,0 հզ. դրամ՝ դպրոցի և մանկապարտեզի համար գրենական պիտույքների ձեռք բերում, շենքերի վերանորոգում
3. տարեկան 100,0 հզ. դրամ՝ համայնքային տեխնիկայի վերանորոգում
4. տարեկան 50,0 հզ. դրամ՝ անապահով ընտանիքների համար դեղորայքի ձեռքբերում:

2.1.1 Համայնքների նկատմամբ ստանձնած սոցիալական պարտավորությունների փաստացի կատարողականը

Ըստ ԱՃԹՆ-ի շրջանակներում հրապարակված Ընկերության հայտարարագրի՝² Ընկերությունն այս տարիներին արդյունահանում չի իրականացրել, պետական որևէ տուրք չի վճարել, հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններն ազդակիր համայնքի նկատմամբ չի կատարել, սակայն Տարածքային կառավարման և զարգացման նախարարության հաշվետվության «Ընդերքօգտագործողի կողմից հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունների կատարման վճարներ» տողում նշվում է, որ այդ նպատակով 2016, 2017 թվականներին համայնքային բյուջե է փոխանցվել 250,0 հազարական դրամ գումար: 2018թ-ին Ընկերությունը նման վճարում չի կատարել: Բարեգործական հատկացումներ Ընկերությունը համայնքին չի կատարել:

Տարածքային կառավարման և զարգացման նախարարության և Ընկերության հաշվետվությունների միջև կան էական տարբերություններ:

2.2 Բնապահպանական պարտավորություններ

22.08.2014թ. Պ-515 Ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է՝

1. Ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից
2. Ապահովել բնության, պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից
3. Ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությամբ նախատեսված պայմանները:
4. Նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն՝ վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար կամ բերել անվտանգ վիճակի:
5. Ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:

2.2.1 Բնապահպանական պարտավորությունների փաստացի կատարողականը

Հանքը չի շահագործվում, ոսկու կորզման ֆաբրիկան չի կառուցվել, կատարվել են ընդամենը հողային աշխատանքներ: Աշխատանքները չեն շարունակվել, հետևապես որևէ եզրակացություն դժվար է կատարել:

2.3 Հանքի փակում, հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ և կատարողական

² <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/?year=2017&company=26>

Հանքի փակման ծրագրով նախատեսված է դրա համար անհրաժեշտ չորս միջոցառումների իրականացում: Առաջին միջոցառմամբ նախատեսվում է «Բացահանքը սպասարկող ավտոճանապարհի, հարակից խախտած հողատարածքների վերականգնում», որն, ըստ ընդերքօգտագործման պայմանագրի, իրականացվելու է 10-օրյա ժամկետում: Նշված գործողությունների իրականացման ֆինանսական մասով նախատեսված է 2066.4 հազար դրամի ծախս:

Հանքի փակման շրջանակներում հաջորդ միջոցառումն «արտադրական հրապարակի ապամոնտաժում, սարքավորումների տեղափոխումն» է, որն ըստ պայմանագրի պետք է իրականացվի 2 օրում և ծախսվի 150.0 հազար դրամ:

Ամենատևական միջոցառումը «մոնիթորինգի իրականացումն» է, որը պետք է տևի 5 տարի: Այդ ամբողջ ժամանակահատվածի համար նախատեսված է ընդամենը 150.0 հազար դրամի ծախս:

Պայմանագրով նախատեսված վերջին միջոցառումը «նախագուշացնող արգելափակող միջոցների տեղադրումն» է, որը տևելու է 30 օր, և որի համար նախատեսված է 200.0 հազար դրամի ծախս:

Ինչպես մյուս բոլոր հանքավայրերի պարագայում, այստեղ ևս հնարավոր չէ գնահատել հանքի փակման պարտավորությունների մասով կատարողականի ցուցանիշները, քանի որ գործող օրենսդրության համաձայն՝ հանքի փակման գործընթացները սկսվում են հանքավայրի շահագործման ավարտից ընդամենը երկու տարի առաջ: Մասնավորապես, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 60.1-րդ հոդվածի համաձայն, «Ընդերքօգտագործողները հանքի շահագործման ընթացքում և հանքի փակումից հետո պարտավոր են իրականացնել ընդերքօգտագործման թափոնների կառավարման, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումներ՝ շրջակա միջավայրին կամ մարդկանց առողջությանը հասցվող վնասի և վթարների կանխարգելման կամ նվազագույնի հասցնելու նպատակով»: Մինևսույն ժամանակ, նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն, օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումը ներկայացնելիս, Ընկերությունն ընդամենը հավաստել է, որ հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կկազմի հանքի փակման վերջնական ծրագիր:

Նշված՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք հայցելու դիմումով ներկայացվող՝ հանքի փակման ծրագիրը պետք է ներառի նաև խախտված հողերի ռեկուլտիվացիայի, ենթակառուցվածքների ապամոնտաժման, աշխատուժի սոցիալական մեղմացման, մշտադիտարկումների իրականացման, հանքի փակման ծրագրի իրականացման ֆինանսական երաշխիքների վերաբերյալ դրույթներ: Օրենսդրության վերլուծությունից հետևում է, որ այս դրույթներն ընդհանրական կերպով են ներկայացնում հանքի փակման գործընթացը, մինչդեռ հանքի փակման իրական ծրագիրը ներկայացվում է դրանից ընդամենը 2 տարի առաջ:

3. Համալիրի ՇՄԱԳ եզրակացությունների մասին

«Բակտեկ Էկո» ՍՊԸ-ն 06.08.2014թ-ին ստացել է «Արջուտի ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ» ԲՓ-58 շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական եզրակացությունը, իսկ 19.09.2015թ-ին՝ «Արջուտի ոսկու հանքավայրի վերամշակման և ֆաբրիկայի կառուցման և շահագործման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվություն» ԲՓ-74 դրական եզրակացությունը:

3.1 ԲՖ 58 06.08.2014թ. փորձաքննական եզրակացության պահանջներն են՝

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները, ներառյալ ՀՀ կառավարության որոշումը՝ հողերի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ:

2. Անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնել

- հանքավայրի հաջորդ փուլի շահագործման նախագծային փաստաթղթերը

- խախտված տարածքների ռեկուլտիվացիայի և հանքավայրի կոնսերվացման նախագծային փաստաթղթերը

3. Շինարարության և շահագործման ընթացքում առաջացած շինադրը (կենցաղային ադր), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգի, հետնախագծային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվությունը պետք է հասանելի լինի պետական շահագրի մարմինների և հասարակայնության համար:

3.2 19.09.2015թ. ԲՓ-74 փորձաքննական եզրակացության պահանջներն են՝

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները, ներառյալ ՀՀ կառավարության որոշումը հողերի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ:

2. Աշխատանքների իրականացման ընթացքում, ելնելով տեղանքի յուրահատկություններից, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին և բնապահպանական պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը /մասնավորապես կեղտաջրերի լոկալ մաքրման կայան/:

3. Ֆաբրիկայի շահագործման գործընթացում շրջակա միջավայրը փոշու արտանետումներից պաշտպանելու նպատակով անհրաժեշտ է հանքաքարի

տեղափոխումն իրականացնել ծածկված տրանսպորտային միջոցներով, ինչպես նաև նախատեսել տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված ծրագրով հարակից տարածքների, ծառատնկման և կանաչապատման աշխատանքներ:

4. Շինարարության և շահագործման ընթացքում առաջացած շինադրն (կենցաղային ադր), ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգի, հետնախազծային միջոցառումների իրականացման և վերլուծության հաշվետվությունը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հասարակայնության համար:

Համաձայն «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ կետի ՇՄԱԳՓ-ի եզրակացությունները կորցրել են իրենց ուժը:

4. Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում հրապարակված «Բակտեկ Էկո» ՄՊԸ-ի ընդհանուր ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տվյալներն են՝

Տվյալ	2016 թ.՝ հաշվետվություն չի ներկայացրել	2017 թ.	2018թ.
Ոսկու պարունակությամբ թանկարժեք մետաղի խտանյութ	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Շահութահարկ, դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Եկամտային հարկ, դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Ավելացված արժեքի հարկ, դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Ակցիզային հարկ, դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Ռոյալթի, դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Բնօգտագործման վճար, դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Բնապահպանական վճարներ, դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	0	0

Բնապահպանական վճարներ (մաքսային), դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
ՇԹ Պետտուրք, դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	10000000՝ չի վճարվել	10000000՝ չի վճարվել
ՇՄՊ դրամագլուխ, դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	Չի հաշվարկվել և չի վճարվել	Չի հաշվարկվել և չի վճարվել (Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության 2018թ-ի հաշվետվության՝ վճարել է 697840 դրամ)
Մշտադիտարկումների իրականացման վճար, դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	Չի հաշվարկվել և չի վճարվել	Չի հաշվարկվել և չի վճարվել
Գույքահարկ (Արջուտ), դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Հողի հարկ (Արջուտ), դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Վարձակալություն (Հողամաս), դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Վարձակալություն (Անշարժ գույք)	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Վարձակալություն (փոխադրամիջոց)	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Սոց.-տնտ. պարտավորություն (Արջուտ)	հաշվետվություն չի ներկայացրել	Չի հաշվարկվել և չի վճարվել	Չի հաշվարկվել և չի վճարվել
Բարեգործական հատկացումներ (Արջուտ)	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Ոչ ֆինանսական օգն.	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Տուգանք, դրամ	հաշվետվություն չի ներկայացրել	0	0
Աշխատատեղեր	հաշվետվություն չի ներկայացրել	2	1
Անհատույց	հաշվետվություն չի ներկայացրել	0	0

օտարումն.	ներկայացրել		
-----------	-------------	--	--

5. «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ի կողմից 2016, 2017, 2018 թվականներին Արջուտ համայնքի բյուջեին կատարած վճարումներ մասին

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Ընկերության հաշվետվություններում առկա տարբերությունների մասին

2018թ. Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին վճարված գումարների մասով կա տարբերություն. համաձայն Ընկերության ներկայացրած հաշվետվության՝ վերջինս վճարումներ չի կատարել: Այնուհանդերձ, ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացրած տվյալների համաձայն՝ Ընկերությունը կատարել է համալրում 69784.0 դրամի չափով:

2017թ. Ընդերքօգտագործողի կողմից հանքարդյունահանման պայմանագրով սահմանված համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունների կատարման վճարների մասով առկա են տարբերություններ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Ընկերության հաշվետվությունների միջև: Ընկերության ներկայացրած հաշվետվության համաձայն՝ վերջինս վճարումներ չի կատարել, մինչդեռ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալներով, Ընկերությունը կատարել է 250,0 հզ. դրամի չափով վճարումներ:

Ներկայացված տվյալների ճշգրտությունը գնահատելու առումով հարկ է նշել, որ իրականում Ընկերությունը համայնքային բյուջե չի կատարել վճարումներ, քանի որ մինչ օրս գործունեություն չի ծավալել, Արջուտ համայնքից հողեր և փոխադրամիջոցներ չի վարձակալել, չի փոխել հողերի գործառնական նշանակությունը: Դա հաստատվում է Ընկերության և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ԱՃԹՆ հաշվետվություններով և համայնքապետի հետ ԷկոԼուրի անցկացրած հարցազրույցով:

6. 2016, 2017, 2018 թվականներին Ընկերության կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին, մշտադիտարկումների համար, բնապահպանական և բնօգտագործման հարկերի մասին

Ընկերությունը Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի բազային չափը 2440000 դրամ է, Ըստ Ընկերության հաշվետվությունների՝ 2016-2018թթ. Դրամագլխին համալրում չի կատարել: Մինչդեռ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հաշվետվության համաձայն՝ 2018թ. Ընկերությունը վճարել է 697840 դրամ այդ տարվա համար նախատեսված 82960 դրամի փոխարեն, բնապահպանական և առողջապահական պահանջվող մշտադիտարկումների իրականացման վճարներ չի մուծել, բնապահպանական հարկեր չի հաշվարկել և չի վճարել:

Նշենք, որ Ընդերքօգտագործման պայմանագրով հանքի չշահագործելը չի դիտարկվում որպես հարկերից և տուրքերից ազատման հիմնավորում:

7. Բնապահպանական վճարների նպատակային օգտագործման, մասհանումների և ծրագրերի վերաբերյալ

Հայաստանի ԱՃԹՆ պաշտոնական կայքում հրապարակված «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ի հաշվետվության համաձայն՝ Ընկերությունը 2016, 2017 և 2018թթ. բնապահպանական վճար չի հաշվարկել և չի վճարել պետական բյուջե:

Մինչ 2020 թ-ը «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ն ներառված չի եղել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքում առկա կազմակերպությունների ցանկում, ինչի հետևանքով Ընկերության բնապահպանական վճարներից Արջուտ համայնքը չի օգտվել բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար: 2020թ-ի մայիսի 27-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը³, որով այդ ցանկում ընդգրկվեցին նաև մետաղական հանքավայրեր շահագործող բոլոր կազմակերպությունները:

8. Համայնքային զարգացման ծրագրերում «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ի ներգրավվածությունը

ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրում⁴ «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ին մեծ տեղ է հատկացված: Մասնավորապես, համայնքի ուժեղ կողմերի մեջ թվարկված է համայնքում բազմամետաղ հանքավայրի առկայությունը: Ըստ հնգամյա զարգացման ծրագրի՝ հանքավայրի շահագործման և հարստացուցիչ ֆաբրիկայի աշխատանքի դեպքում ակնկալվում է 120-150 նոր աշխատատեղի բացում: Նշվում է, որ Ընկերության ներկայացված ծրագրով հանքի և ֆաբրիկայի շահագործումից ստացված զուտ եկամուտի 10 տոկոսի չափով յուրաքանչյուր տարի համայնքում իրականացվելու են սոցիալական ծրագրեր: Համայնքի կենտրոնական փողոցի ասֆալտապատման համար պահանջվող 250-300 մլն. դրամն ակնկալվում են ստանալ համայնքի, պետական բյուջեի և «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ի համաֆինանսավորման հաշվին: Հնգամյա ծրագրում հանքավայրի և գործարանի վրա թողած բացասական ազդեցությունների մասին նշված է, որ Ընկերությունը հավաստիացրել է, որ այդ բացասական ազդեցությունները չեն լինի:

Հնգամյա զարգացման ծրագրով նախատեսված 8 ծրագրերի թվում շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ծրագիր նշված չէ: Զարգացման ծրագրերի թվում են ոռոգման ջրի ներքին ցանցի վերանորոգման և խմելու ջրագծի վերանորոգման միջոցառումները:

9. «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունն ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի և Ընկերության միջև համագործակցության մասին

³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143032>

⁴ http://lori.mtad.am/u_files/file/lori/Hngamya%20tsragrer/%D4%B1%D6%80%D5%BB%D5%B8%D6%82%D5%BF%202017-2021%20%D5%80%D4%B6%D4%BE.pdf

Ծրագրի շրջանակներում «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն 29.07.2020 թվականին հանքի չշահագործման պատճառների, հանքավայրի շահագործման հետագա հեռանկարների, ընդերքօգտագործման պայմանագրով ստանձնած սոցիալ-տնտեսական և բնապահպանական պարտավորությունների կատարման ընթացքի, համայնքային հողերից համալիրի շահագործման նպատակով տրամադրված հողերի գործառնական նշանակության փոփոխության գործընթացների վերաբերյալ տեղակատվություն ստանալու համար դիմել է «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Վահան Զախարյանին /Նախագահ 1/: Առ 2020թ. սեպտեմբեր ամիսը, սակայն չենք ստացել մեր նամակի պատասխանը:

10. Արջուտ համայնք այցելության ընթացքում բնակչության շրջանում անցկացրած հարցումների վերլուծություն

Ծրագրի շրջանակներում ազդակիր համայնքի բնակչության շրջանում սոցիալական, շրջակա միջավայրի և առողջապահության հարցերի վերաբերյալ անցկացվել են հարցումներ: Հարցման նպատակն էր պարզել ԱՃԹՆ – ի ոլորտում բնակչության իրազեկվածության մակարդակը, նրանց գնահատականները և կարիքները, ինչպես նաև նրանց դիրքորոշումը հանքավայրի հետագա շահագործման հարցերում, լսել նրանց առաջարկներն առկա բնապահպանական խնդիրների լուծման վերաբերյալ:

10.1 Հարցմանը մասնակցել են 11 անձ՝ 7 կին և 4 տղամարդ, այդ թվում նաև Արջուտ համայնքի ղեկավարը: Հարցման արդյունքների գերակշիռ մասն արտահայտված են սույն հաշվետվության նախորդ բաժիններում, իսկ մյուս մասի արդյունքների վերլուծությունը ներկայացվում է ստորև՝

- Հարցվածները պատասխանել են, որ ներկայումս իրենց եկամուտները գոյանում են հողագործությունից 25%, անասնապահությունից՝ 37,5 5%, վարձու աշխատանքից՝ 25%, արտագնա աշխատանքից՝ 12,5%:
- Որպես համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում առկա խնդիրներ հարցման մասնակիցների 37,5%-ը նշում է աշխատատեղերի բացակայությունը, 37,5%-ը՝ հողի ռոտզման համար պահանջվող ջրի պակասը, 12,5 %-ը՝ տրանսպորտային դժվարությունները, 12,5 %-ը՝ ստացված գյուղատնտեսական ապրանքների իրացման հետ կապված դժվարությունները:
- Հարցվածների գերակշիռ մասը կողմ է հանքի շահագործմանը և ոսկու կորզման ֆաբրիկայի բացմանը, քանի որ աղքատությանից և սոցիալական ծանր վիճակից դուրս գալու միակ ճանապարհը համարում է դա: Այս կարծիքի ձևավորմանը նպաստել է Ընկերության մոտիվացիան այն մասին, որ բացահանքի արդյունահանման աշխատանքներում նախատեսվում է Արջուտ համայնքի աշխատուժի ներգրավում՝ 1-ին փուլում՝ 27 մարդու, 2-րդ փուլում՝ 55 մարդու: Ներկայումս Ընկերության աշխատանքներում զբաղված է ընդամենը 1 մարդ, բնականաբար, Ընկերության ղեկավար անձը: Հարցման մասնակիցներից միայն մեկն էր, որ երբևէ ներգրավվել էր «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ի աշխատանքներում, այն էլ հանքավայրի նախապատրաստական փուլում:
- Շրջակա միջավայրի աղտոտման և իրենց առողջության վրա ունեցած ազդեցության միջև կապ չի տեսել հարցվածների հիմնական մասը, սակայն նրանք այդ հարցում ունեն որոշակի վերապահում, որն է՝ համալիրի շահագործման ժամանակ պետք է

պահպանվեն աղտոտման կանխարգելման համար պահանջվող նորմերը: Բոլոր դեպքերում հարցվածների 45%-ին անհանգստացնում է շրջակա միջավայրի աղտոտվածությունը:

- Ըստ հարցվածների 50,0%-ի՝ խախտված հողերի հետևանքների վերացման համար պատասխանատու է Ընկերությունը, ըստ 12,5 %-ի՝ կառավարությունը և Ընկերությունը, իսկ 37,5 %-ին չի հետաքրքրում պատասխանատուն, սակայն նրանց անհրաժեշտ է մաքուր և չաղտոտված բնություն:

- Հարցման մասնակիցները կարծում են, որ ներկա փուլում շրջակա միջավայրի աղտոտում տեղի չի ունենում, քանի որ հանքավայրը չի շահագործվում: Սակայն համայնքի հարևանությամբ շահագործվող Վանաձոր քաղաքային աղբավայրից տարածվում է գարշահոտություն, իսկ աղբատար մեքենաներից՝ փոշու արտանետումներ և աղմուկ:

- Առողջական խնդիրներ ունենալու ժամանակ բնակիչներն օգտվում են տեղի բուժկետից, որի սպասարկման ծառայությունից գոհ է հարցվածների 20%-ը: Ավելի լուրջ առողջական խնդիրների դեպքում օգտվում են մարզային և Երևանի առողջապահական կենտրոնների ծառայություններից:

- Համայնքի ղեկավարն, ըստ էության, չէր տիրապետում Ընկերության կողմից ստանձնած սոցիալ-տնտեսական օժանդակության պարտավորությունների, այդ մասով կատարած մասնահանումների, սոցիալական օժանդակության, տեղական հարկերի և տուրքերի վերաբերյալ տեղեկատվությանը, քանի որ այդ մասին մեր բարձրացրած բոլոր հարցերին տվեց դրական պատասխան, մինչև Ընկերության և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2016, 2017 և 2018 թվականներին ԱՃԹՆ շրջանակներում տված հաշվետվությունների համաձայն՝ Ընկերությունն նման վճարումներ չի կատարել⁵ բացառությամբ 2016 և 2017 թվականներին, ըստ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, 250 000 դրամի չափով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունների կատարման վճարների տրամադրումը:

Համայնքապետն ընդգծեց նաև, որ COVID-19-ի համավարակի ժամանակահատվածում համայնքի 100 ընտանիքի Ընկերությունը տրամադրել է սնունդ, իսկ 2015 թվին գյուղի դպրոցին հասկացրել է 400,0 հզ. դրամ գումար /տվյալների հավաստիությունը մեր կողմից ճշտել հնարավոր չէր համապատասխան փաստաթղթերի բացակայության պատճառով/:

- Համայնքի ղեկավարը նշեց, որ, ընդերքօգտագործման պայմանագիրը կնքելիս, համայնքը ներգրավված չի եղել դրա շուրջ ընթացող քննարկումներին և չի արտահայտել իր դիրքորոշումը:

10.2 Առաջարկներ հարցման մասնակիցներից՝

- Փոշու կանխարգելման համար հանքավայրին հարակից տարածքներում կատարել ծառատունկ:
- Փակել համայնքի հարևանությամբ գործող Վանաձորի քաղաքային աղբավայրը և ռեկուլտիվացնել այն:
- Մեծացնել տեղի բուժսպասարկման կետի կարողությունները, ավելացնել ևս մեկ

⁵ <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/?year=2017&company=26>

բուժաշխատողի հաստիք, բացել առաջին բուժօգնության դեղերի վաճառքի դեղատուն, լավացնել համայնքն սպասարկող շտապ բժշկական օգնության ծառայության աշխատանքների որակը

- Լուծել ջրի ներքին ցանցի վերանորոգման և խմելու ջրագծի վերանորոգման խնդիրները
- Որպես համայնքի զարգացման հեռանկար, բացի հանքարդյունաբերությունից դիտարկել տեղական հումքի վերամշակման փոքր ձեռնարկությունների հիմնումը, էկոգրոսաշրջության զարգացումը, անասնապահության զարգացումը, որին սակայն խոչընդոտում է համայնքային բյուջեի սահմանափակությունը, և համայնքը կարիք ունի պետական աջակցության:
- Վերոնշյալ ծրագրերը հնարավոր է իրականացնել սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

11. Եզրակացություն

1. «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ն «Արջուտի ոսկու հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ» ԲՓ-58 շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական եզրակացությունը ստացել է 0608.2014թ-ին, իսկ 19. 09. 2015թ-ին ստացել է «Արջուտի ոսկու հանքավայրի վերամշակման և ֆաբրիկայի կառուցման և շահագործման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվություն» ԲՓ-74 դրական եզրակացությունը: Քանի որ եզրակացությունները ստանալուց հետո մեկ տարվա ընթացքում Ընկերությունը չի շահագործվել հանքը և չի կառուցվել հարստացուցիչ ֆաբրիկան, եզրակացությունները ուժը կորցրած են ճանաչվում «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն:
2. Բացահանքի արդյունահանման աշխատանքներում նախատեսվում էր ներգրավել 1-ին փուլում՝ 27 մարդ, 2-րդ փուլում՝ 55 մարդ, ընդ որում ծրագրի նախագծում նշվել էր, որ աշխատուժը լինելու էր Արջուտ համայնքից: Ներկայումս ներգրավված է ընդամենը 1 մարդ: Նույնն վիճակն է նաև նախատեսված ոսկու կորզման ֆաբրիկայի բացումով նախատեսվող աշխատատեղերի ստեղծման հարցում, այսինքն, չի կատարվել հանքի շահագործման թույլտվության նախապայմաններից մեկը՝ նոր աշխատատեղերի ստեղծման մոտիվացիան:
3. Ընկերությունը բնապահպանական և առողջապահական պահանջվող մշտադիտարկումների իրականացման վճարներ չի մուծել, բնապահպանական վճարներ չի հաշվարկել և չի մուծել, մինչև 2018 թվականը գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրքը չի վճարել, սահմանված կարգով չի փոխել հողի գործառնական նշանակությունը, հողի հարկ չի մուծել: Այսինքն, իր անգործության հետևանքով բացասական ազդեցություն է թողել ՀՀ պետական և համայնքային բյուջեի կանխատեսումների գործընթացի վրա:

4. Ընդերքօգտագործման պայմանագիր կնքելիս՝ համայնքը չի ներգրավվել Ընկերության սոցիալական պատասխանատվության հարցերի քննարկման գործընթացին և չի արտահայտել իր դիրքորոշումը պայմանագրի կնքման ժամանակ:
5. Չնայած նրան, որ, ըստ 22.08.2014թ. Պ-515 ընդերքօգտագործման պայմանագրի, Ընկերությունն ազդակիր Արջուտ համայնքի նկատմամբ ունի ստանձնած որոշակի սոցիալական պարտավորություններ, չի կատարել իր պայմանագրային պարտավորությունները:
6. Շահագործման թույլտվություն ստանալուց հետո Ընկերությունն արդյունահանման աշխատանքներն առ այսօր չի սկսել, չապահովելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը, խախտելով Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին 6-րդ մասի պահանջները:
7. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
8. Չի ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը՝ խախտելով Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի և ընդերքօգտագործման պայմանագրի պահանջները:
9. Կան համակարգային խնդիրներ հանքի փակման ծրագրի կատարողականը գնահատելու հարցում, քանի որ հնարավոր չէ այն գնահատել նախքան հանքի փակման փաստացի գործընթացների իրականացումը, որն սկսվում է հանքի փաստացի փակումից ընդամենը 2 տարի առաջ:
10. Հանքի փակման համար ներկայացված ծախսերն իրական չեն, քանի որ խիստ վաղաժամ են՝ հաշվի առնելով, որ Արջուտի հանքի փակումը նախատեսվում է իրականացնել 2040 թվականին:
11. Հանքի փակման ֆինանսական երաշխիքներն իրական չեն, դրանք ընդամենը Ընկերության ներկայացրած և ընդերքօգտագործման պայմանագրով ամրագրված պարտավորություններ են, որոնք ապահովված չեն Ընկերության ֆինանսական դրությունից դուրս գտնվող լրացուցիչ երաշխիքներով և կարող են փոշիանալ Ընկերության սնանկացմամբ:
12. ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 2020 թվականի մարտի 11-ի գրության համաձայն՝ «Բակտեկ Էկո» ՍՊԸ-ն օրենքով սահմանված կարգով իրական սեփականատերերի վերաբերյալ հայտարարագրեր չի ներկայացրել, խախտվել է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջը:

Հավելված 1

“Ecolur” Informational NGO

Address: 24 Shinararneri str.
33 apt, 0038 Yerevan,

Armenia

E-mail:

ecolurpressclub@gmail.com

Web site: www.ecolur.org

Tel. (37491) 92 12 64 mob.



**«ԷկոԼուր» տեղեկատվական
ՀԿ**

Հասցե՝ 24 Շինարարների,
33 բն. 0038 Երևան,
Հայաստան
Էլ. հասցե՝

ecolurpressclub@gmail.com

Էլ. կայք՝ www.ecolur.org

Բջջ.՝ (+37491) 92 12 64

«Բակտեկ Էկո» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
պարոն Վահան Զախարյանին
«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ
Ինգա Զարաֆյանից

Հարգելի պարոն Զախարյան,

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն իրականացնում է «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունը ԱՃԹՆ գործընթացում» ծրագիրը ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է նպաստել մետաղական հանքերի շահագործման թույլտվություններ ունեցող, սակայն չաշխատող կազմակերպությունների պատասխանատվության բարձրացմանը ընդերքօգտագործման պայմանագրային և այլ թույլտվություններով ամրագրված պարտավորությունների կատարման նկատմամբ, նպաստել մետաղական հանքերի շահագործման թույլտվություններ ունեցող, սակայն չաշխատող կազմակերպությունների հաշվետվողականության և պատասխանատվության բարձրացմանը ազդակիր համայնքների նկատմամբ: Ծրագրի շրջանակներում բացահայտված փաստերի հիման վրա կպատրաստվի հաշվետվություն և ոլորտի բարեփոխմանն ուղղված առաջարկներ, որոնք կներկայացվեն Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության Բազմաշահառու խմբին:

Ելնելով վերոնշյալից և առաջնորդվելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով՝ խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Ի՞նչ պատճառներով չի շահագործվում Ձեր ընկերության տիրապետմանը հանձնված Արջուտի ոսկու հանքավայրը
2. Նախատեսվո՞ւմ է հանքի շահագործում, եթե այո, ապա երբվանի՞ց:
3. Փոխվա՞ծ են արդյոք Ընկերության կողմից օգտագործվող հողերի նպատակային նշանակության կատեգորիաները և եթե այո, ապա քանի՞ հեկտար հանքավայրի և քանի՞ հեկտար ընկերության ենթակառուցվածքների համար:
4. Նշե՞ք խնդրեմ ըստ տարիների ազդակիր համայնքի նկատմամբ 22.08.2014թ. Պ-515 ընդերքօգտագործման պայմանագրով ընկերության ստանձնած պարտավորությունների կատարման մասին, ինչպես նաև բարեգործական ծրագրերի շրջանակներում ցուցաբերած օժանդակության մասին:
5. Ընկերության կողմից ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում հանքաջրերի արտահոսքի վերահսկման, ինչպես նաև հողերի, մթնոլորտային օդի աղտոտման կանխարգելման համար:

Հարգանքով՝

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ
Ինգա Զարաֆյան՝

կենսաբանական գիտությունների թեկնածու



Handwritten signature

29.07.2020թ.

Սույն հաշվետվությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: